

Հայ միջնադարյան գրականություն



ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ

(1722-1795)



Սայաթ-Նովան ապրել և գործել է 18-րդ դարում՝ Վրաստանում (Քարթլի-Կախեթ): Դա արևելյան տիպի ավատատիրական-ճորտատիրական երկիր էր, որտեղ դեռևս ձգվում էր միջնադարը: Ուշ միջնադարի հայ բանաստեղծ-աշուղ, ժողովրդական-աշուղական նոր դպրոցի արևելյան ձևի հիմնադիրն է: Սայաթ-Նովայի կյանքը ավելի քան 150 տարի եղել է գրականագետների, լեզվաբանների, պատմաբանների և փիլիսոփաների բանավեճերի առարկան: Նրա կյանքի բազմաթիվ կարևոր հանգամանքներ և մանրամասներ մինչև օրս էլ ամբողջությամբ չեն ուսումնասիրվել: Նրա մասին տեղեկությունների հիմնական

աղբյուրներից են հենց իր գրած բանաստեղծությունները: Սայաթ-Նովան ունի մի շարք լեզուներով գրված բանաստեղծություններ:

18-րդ դարում Թիֆլիսում ապրել են հայ եկեղեցական, կրթական ու մշակութային կյանքին իրենց նպաստը բերած բազմաթիվ գործիչներ: Վրաց արքունիքում են ծառայել հայազգի որոշ նկարիչներ ու երգիչ-երաժիշտներ: Վերջիններիս մեջ ամենանշանավորն է դարի խոշորագույն աշուղ-բանաստեղծը՝ Սայաթ-Նովան:

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ծնվել է 1722 թվականին Թիֆլիսում: Մկրտության անունը Արուֆին (Հարություն): Հայրը՝ մահտեսի Կարապետը, հալեպցի էր, ծնունդով Կիլիկիայի Ադանա քաղաքից, մայրը՝ Սառան, ապրել է Թիֆլիսի Հավլաբար հայկական արվարձանում (Սանահին գյուղում):

Քարթլի մայրաքաղաք Թիֆլիսն այդ ժամանակ արիեստավորական և առևտրական աշխույժ ու կենսուրախ կենտրոն էր: Քաղաքի հիմնադրումից ի վեր այստեղ մշտապես եղել է մեծաքանակ հայ բնակչություն: Պատմական հանգամանքների թելադրանքով՝ այս քաղաքում ժամանակի ընթացքում խաչասերվեցին հայության արևելյան և արևմտյան հատվածները: Հայկական տարբեր բարբառների փոխազդեցությամբ ստեղծվեց ինքնօրինակ ու գունեղ թիֆլիսահայ բարբառը: Այդպես միաձուլվեց նաև հայության տարբեր հատվածների հոգևոր հարստությունը, և առաջացավ մի յուրօրինակ հայկական միջավայր:

Պատանի Արուֆինը ծննդավայրում սովորել է արիեստ, ստացել նախնական կրթություն, հմտացել երգ-երաժշտության մեջ՝ տիրապետելով երեք լարային գործիքների:

Ենթադրվում է, որ 16-ամյա Արուֆինին գերեվարել են լեզգիները և վաճառքի հանել Թուրքիայում: Մի քանի տարի նա դեգերել է Արևելքի որոշ երկրներում, մասնակցել Նադիր շահի կազմակերպած հնդկական արշավանքին (1738-1739)՝ ընդգրկվելով շահական բանակում որպես երգիչ-նվագաձու:

Գերեվարված Արուֆինը 1741 թվականին, Հերակլ արքայազնի միջոցով, Հնդկաստանում փրկագնվում, բերվում է Թիֆլիս, հաստատվում վրացական պալատի երաժշտանոցում: Այնուհետև դառնում է Հերակլի պալատական բանաստեղծը:

1742-ից սկսում է ստեղծագործել, նախ՝ թուրքերեն և վրացերեն՝ ընդունելով Սայաթ-Նովա (Որսկանի թոռ) աշուղական անունը: Նույն այդ թվականին էլ նա

սիրահարվել է Հերակլ արքայի քույր Աննա Բատոնիշվիլիին:

1752-ից արքունական բանաստեղծը ստեղծագործում է նաև մայրենի լեզվով: Այդ ժամանակ նա, արքայադստեր հանդեպ տաժաժ հանդուգն սիրո համար, վտարվում է պալատից: Երկու տարի անց Հերակլը, ընդառաջելով սիրելի երգչի խնդրանքներին՝ նրան վերստին ընդունում է արքունիք:

Հատկապես վրաց բարձրաստիճան պաշտոնյաների դեմ ունեցած սուր ելույթների համար, մոտավորապես 1759-ին բանաստեղծը երկրորդ անգամ և առմիշտ վտարվում է արքունիքից: Հարկադրաբար դառնում է քահանա՝ վերակոչվելով Ստեփանոս: Ամուսնանում է լոռեցի Մարմարի հետ, ունենում է չորս զավակ: 1760-1764 թվականներին գործում է Պարսկաստանի Գիլան նահանգի Էնզելի քաղաքի հայկական եկեղեցում: Այստեղ գրչագրում է Գրիգոր Նարեկացու «Ողբերգության մատյանը»: Այնուհետև (1765-1766 թթ.) հայտնվում է Զաքաթալայի Կախի ավանի հայկական եկեղեցում, որտեղ ևս զբաղվում է գրչագրությամբ:

Կնոջ մահից հետո (1768) ընդունում է կուսակրոնություն: Գործում է Թիֆլիսի Սուրբ Գևորգ եկեղեցում հաստատված Հաղպատավանքի Առաջնորդարանում, որոշ տարիներ՝ նաև Հաղպատի Սուրբ Նշան վանքում: 1795 թվականի սեպտեմբերի 12-ին, երբ պարսից շահ Աղա-Մահմադի զորքերը գրավում ու ավերում են Թիֆլիսը, շատերի հետ զոհվում է նաև Ստեփանոս-Սայաթ-Նովան: Նրա մարմինն ամփոփում են Սուրբ Գևորգ եկեղեցու բակում: Այստեղ, 1914 թվականին, Հովհաննես Թումանյանի նախաձեռնությամբ, դրվել է նրա շիրմաքարը, որի շուրջը ամեն տարվա մայիս ամսին կազմակերպվում է մեծ երգչի հիշատակը հավերժացնող՝ Վարդատոն կոչված հանդիսությունը:

ՄԵԾԵՐԸ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՄԱՍԻՆ

«...Մեր վիթխարի Սայաթ-Նովան մի հոյակապ սիրահար է՝ բռնված ու բռնկված սիրո հրդեհով, նրա լույսի փակ էլ նկատում է աշխարհքն ու իրերը, զգում է, որ էրվում, վերջանում է ինքը, բայց մնում է արի ու բարի, անչար ու անաչառ, վեհ ու վսեմ՝ որպես աշխարհքի ու մարդու մեծ բարեկամը»:

Հովհաննես Թումանյան

«Այնպիսի բանաստեղծներով, ինչպիսին Սայաթ-Նովան է, պետք է պարծենա բովանդակ մարդկությունը. նրանք երկնքի վեհ ընծաներն են, որ ուղարկվում են ոչ ամենքին և ոչ հաճախակի. նրանք նախախնամության ընտրյալներն են, որոնք օրհնանք են դրոշմում իրենց դարին և իրենց հայրենիքին»:

Վալերի Բրյուսով

«Սայաթ-Նովան այնպես ստեղծագործեց, որ մտավ գրականության մեջ: Ո՛չ թե գրականության պատմության, այլ գրականության մեջ՝ կենդանի և ապրող, կարդացվող ու երգվող, միշտ ճարվող, բայց միշտ փնտրվող գրականության մեջ: Մտավ իբրև աղ: Այսքանով էլ Սայաթ-Նովան անհաս չէ, թեկուզ և մեծ անհաս, այլև ժամանակ լցնող շունչ է, փարածություն լցնող օդ, և այդպիսին մնում է մինչև հիմա՝ 200 տարի հետո էլ»:

Պարույր Սևակ

«Ոսկի բառեր, անգին քարեր, լալ ու գոհար շարել ես դու,
Քեզ միայն քո յարն է վառել, քանի յարեր վառել ես դու...»:

Եղիշե Չարենց

ՄՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Սայաթ-Նովան, իբրև քնարերգու, իր մեջ համատեղում է հեղինակային երկու տիպ՝ աշուղին և բանաստեղծին: Աշուղը արևելյան ժողովրդական երգիչն է: Նա միջնադարում թափանցելով հայ իրականության մեջ՝ փոխարինել ու հաջորդել է մեր ազգային ժողովրդական երգչին՝ գուսանին:

Թիֆլիսը եղել է հայ աշուղության նշանավոր կենտրոններից մեկը: Այդ դպրոցի ամենանշանավոր ներկայացուցիչն է Սայաթ-Նովան: Սակայն նա միաժամանակ նաև անհատական քնարերգության խոշոր ներկայացուցիչ է, «իր հանճարի զորությամբ ժողովրդական երգչի արհեստը վերածեց բանաստեղծի վեհ կոչման» (Վալերի Բրյուսով):

Աշուղ-բանաստեղծ Սայաթ-Նովան գրել է թուրքերեն, վրացերեն և հայերեն խաղեր: Խաղը աշուղական երգն է, որը, ըստ կառուցվածքի, տաղաչափության ու բովանդակության, ունի մի քանի տասնյակ տարատեսակներ և երգվում է հեղինակների հնարած կամ հայտնի եղանակներով: Մեզ են հասել Սայաթ-Նովայի հեղինակած մոտ 70 հայերեն, 35 վրացերեն և 130 թուրքերեն երգեր:

Թուրքերեն խաղերի քանակական գերակշռությունը բացատրվում է նրանով, որ ի սկզբանե աշուղության հիմնական լեզուն եղել է թուրքերենը: Սայաթնովյան թուրքերեն երգերի զգալի մասն ստեղծված է աշուղական մրցավեճերին հանդես բերելու համար:

Սայաթ-Նովան առաջինն է, որ աշուղական խաղեր է գրել նաև վրացերեն: Նա վրացական պոեզիան դուրս է բերել արքունիքից և իշխանական պալատներից, մոտեցրել և հասկանալի ու մատչելի դարձրել ժողովրդին:

Թեև թուրքերեն ու վրացերեն լեզուներով Սայաթ-Նովան հորինել է մի շարք բարձրարժեք գործեր, այնուամենայնիվ, նա չի կարողացել այդ լեզուներով համակողմանիորեն վեր հանել իր հոգու ողջ հարստությունը, ուստի, ի վերջո, դիմել է մայրենի լեզվին՝ իրեն ավելի մատչելի խոսակցական բարբառին: Այդպիսով ձեռք բերելով լեզվական-ստեղծագործական բացարձակ ազատություն՝ նա ստեղծել է իր բանաստեղծական ժառանգության լավագույն մասը:

Որպես աշուղ-բանաստեղծ՝ Սայաթ-Նովան ունեցել է երկու հիմնական սնուցարան՝ բանահյուսություն և գրականություն: Նրա եռալեզու ժառանգության հիմքը հայ բազմադարյան հարուստ բանահյուսությունն է, քրիստոնեական-եկեղեցական գրականությունը, գուսանական քնարերգությունն ու միջնադարյան տաղերգությունը, վրաց և արևելյան բանահյուսությունն ու գրականությունը, աշուղական արվեստը...

Սայաթ-Նովան հիմնականում սնվել է Թիֆլիսի և Լոռվա բանահյուսությունից՝ փոխառելով մի շարք ժողովրդական ոճեր ու պատկերներ՝ յուրացնելով ժողովրդի վառ երևակայությունից ծնված բանահյուսական գործերի իմաստությունն ու գունագեղությունը:

Աշուղ-բանաստեղծի հախուռն ներաշխարհի վրա խորապես ներգործել է Գրիգոր Նարեկացու «Ողբերգության մատյանը», որոշ ազդեցություն են ունեցել նաև Ֆրիկը, Կոստանդին Երզնկացին, Հովհաննես Թլկուրանցին, Գրիգորիս Աղթամարցին և այլ տաղերգուներ: Հատկապես իր նշանավոր նախորդի՝ Նաղաշ Հովնաթանի ստեղծագործությունն է եղել այն օղակը, որով Սայաթ-Նովան կապվում է հայ միջնադարյան բանաստեղծությանը:

Սայաթ-Նովան ազգային-հայրենասիրական թեմաներով ու մոտիվներով երգեր չի գրել: Սակայն նրա մարդկային ու բանաստեղծական անհատականությունը զգալիորեն պայմանավորված է ուրույն ազգային դիմագծով, որ հիմնականում արտահայտվում է նրա մտածողության, պատկերային ու գաղափարական համակարգի մեջ: Ուստի և, Պարույր Սևակի որակմամբ՝ «Սայաթ-Նովան ազգային է գողթան երգիչների չափ»:

Բանահյուսական ու գրական ժառանգորդության շնորհիվ և իր արտահայտած գաղափարներով ու բարոյախոսությամբ Սայաթ-Նովայի ստեղծագործությունը հիմնականում առնչվում է ուշ միջնադարի համակարգին: Այն հայ միջնադարյան քնարերգության վերջին բարձրագույն և ինքնատիպ արտահայտությունն է:

Հանճարեղ աշուղ-բանաստեղծը կրում է նաև նոր ժամանակաշրջանի ոգին և հանդիսանում է միջնադարյանի և նորի ճամփաբաժանին կանգնած սահմանագծային բանաստեղծ:

Այս ամենով հանդերձ՝ իր անսպառ հուզականության ու գեղարվեստական հզոր ուժի շնորհիվ սայաթնովյան քնարերգությունը դուրս է հորդացել իր ժամանակաշրջանի սահմաններից, և նրա անմահ հեղինակը դարձել բոլոր սերունդների ժամանակակիցն ու ուղեկիցը...

ՍԻՐԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Սայաթ-Նովայի բանաստեղծական ժառանգության մեծագույն և լավագույն մասը կազմում են սիրերգերը: Դրանց շնորհիվ նա միջնադարյան հայ սիրերգության արժանավոր ու խոշորագույն ժառանգորդն է:

Աշուղ-բանաստեղծն ունեցել է իր ինքնօրինակ սիրո տեսությունը, որն արտահայտվել է նրա եռալեզու ստեղծագործության մեջ: Նա բազմիցս առաջ է քաշել սիրո աստվածաշնորհ լինելու, ինչպես նաև հարատև, հասուն, գիտակցված և

անդավաճան սիրո գաղափարը: Կարևորել է սիրո փոխադարձությունը: Եղել է նաև այն համոզման, թե սերը պիտի երջանկաբեր լինի, և սիրահարները պիտի իրավահավասար լինեն՝ անգամ դասային խոր անջրպետների պայմաններում, քանի որ «Աստուած դիփունանցըն մին հոգի էրիտ» («Աստված բոլորին նույն հոգին է տվել»):

Սերը, ըստ բանաստեղծի, ունի մաքրագործող, ազնվացնող հատկություն, ունի նաև գերբնական ու տարերային ուժ, որ կործանում է սիրահարին: Այն հավերժական և անսպառ, այրող և անտանելի հուր է, խոցող, կտրող զենք, նաև արբեցնող է, դյուրթող է ու խենթացնող: Այդպիսի զգացմունքից ծնունդ առնող այլաբերական վերք-ցավը՝ մարմնական հիվանդության պատկերով, վառ արտահայտություն է գտել սայաթնովյան սիրերգության մեջ:

Սայաթ-Նովայի սիրերգությունը ներառում է թե՛ սիրած կնոջ գովերգ-նկարագրությունը և թե՛ սիրո բերկրանքի ու տառապանքի պատկերումները:

Երգչի գովերգած կինը՝ Գոզալը՝ Նազանին, նրա ճակատագրական սերն է՝ իրական անձ՝ վերածված քնարական կերպարի:

Սերն ու սիրած էակին Սայաթ-Նովան համարել է աստվածաշնորհ, ուստի Գոզալի գեղեցկությունը դիտարկել է իբրև Աստծո ստեղծագործություն, որ կատարյալ է և անզուգական: Այն նաև հավերժական է ու անթառամ, համաժամանակյա է և մշտաթարմ: Բանաստեղծը, գործի դնելով իր արվեստի բոլոր միջոցները, բառային նյութով գծագրում ու երփնագրում է իր գեղեցկուհու պատկիրքը՝ թե՛ ամբողջաբար և թե՛ առանձին բարեմասնություններով՝ ներառյալ նրա հանդերձանքն ու զարդեղենը...

Գոզալի գովերգության համար երգիչը համեմատության եզր է դարձնում թե՛ հեքիաթային և թե՛ իրական աշխարհի գրեթե բոլոր հրաշալիքները, գեղեցկություններն ու մեծությունները: Ընդ որում՝ նա իր սիրած կնոջը, որը միշտ միևնույն անձն է, պատկերում է տարբեր տարիքներում ու կենսական վիճակներում՝ որոշ չափով բացահայտելով նաև նրա ներքին գեղեցկությունը, խառնվածքը, բնավորությունը:

Նազանիի գովերգի լավագույն օրինակներից է «Պատկիրքդ՝ ղալամով քաշած» սիրերգը, որտեղ կարդում ենք.

*Պատկիրքըդ՝ ղալամով քաշած, թահրըդ՝ ռանգեռանգ իս անում,
էրեսիդ խալըն ծածկում է՝ մագիրըդ խափանգ իս անում.
բացվիլ իս կարմիր վարդի պէս, բըլբուլի հիդ հանգ իս անում.
ակոէքըդ՝ օսկումըն շարած, պըռօշըդ մահանգ իս անում:*

*Էրեսորդ նուր լուսնի նըման քանի կ'էհա՝ կու բոլորվի,
դասսրամազրդ նամ չի ուզի՝ առանց հուսիլ կու օլլորվի.
էնդու համա քու տեսնողըն իր ճանփէմէն կու մոլլորվի.
յիփ մըտնում իս մէջլիսումըն, շանգ շուխի, շարանգ իս անում...*

(Պատկերդ՝ վրձնով նկարած, տեսքդ բազմերանգ ես անում, մազերդ վարագույր ես դարձնում, որ երեսիդ խալն է ծածկում, բացվել ես կարմիր վարդի պես. սոխակի հետ երգում ես, ոսկու մեջ շարված առամներդ շուրթերով փայլեցնում ես: Երեսդ, նորալուսնի պես, հետզհետե բոլորվում է, մազափնջիդ խոնավությունն պետք չէ. առանց հյուսելու ոլորվում է, այդ պատճառով քեզ տեսնողն իր ճամփից մոլորվում է. երբ խնջույքի սրահ ես մտնում, հաճելի գվարճանք ու դայլայլ ես անում...):

Սայթաթ-Նովան յուրացնելով հայ միջնադարյան սիրերգության հարուստ գեղարվեստական փորձն ու ավանդույթները՝ իր յուրահատուկ բանաստեղծական խոսքով կատարելության է հասցրել կնոջ գովերգը: Դա մարդ արարածի փառաբանություն-օրհներգ է, մի նոր բարձր մարդերգություն...

Արտաքին ու ներքին գեղեցկությամբ ու արժանիքներով օժտված սիրուհին աշուղ-բանաստեղծին պարզևել է սիրո մեծ բերկրանք: Այդպիսով՝ որոշ սիրերգերում առկա է փոխադարձ սիրո խոստովանությունը: Լավագույն օրինակը «Ինձ սիրեցիր՝ էշխն նընգար» և «Աշխարհումս ամի չիմ քաշի» նույն օրը գրված սիրերգերն են, որոնցից առաջինն ասված է սիրուհու, երկրորդը՝ սիրահարի անունից: Ահա վերջինիս խոստովանությունը.

*Աշխարհումըս ամի չիմ քաշի, քանի վուր ջան իս ինձ ամա.
անմահական ջըրով լիքըն օսկէ փընջան իս ինձ ամա.
նըստիմ՝ վըրես շըվաք անիս՝ զարբար վըրան իս ինձ ամա.
սուչս իմացիր, էնենց սպանէ՝ սուլթան ու խան իս ինձ ամա:*

(Այս աշխարհում չեմ տառապի, քանի դեռ կաս ինձ համար. անմահական ջրով լի ոսկե սկահակ ես ինձ համար. նստեմ՝ վրաս ստվեր անես՝ ոսկեկար վրան ես ինձ համար. մեղքս իմացիր՝ հետո սպանիր, սուլթան ու խան ես ինձ համար):

Սայթաթ-Նովան առավելապես մերժված և անպատասխան սիրո, ավելին՝ ողբերգական սիրո երգիչ է, սիրո տառապանքի երգիչ: Հետևաբար, սիրո վերք-հիվանդության պատճառ դարձած Գոզալ-Նազանին հաճախ հանդես է գալիս

նաև իբրև բեմուրվաթ (անխիղճ) և զալում (դաժան):

Սայաթնովյան երգերում սիրո տառապանքն արտահայտվում է դժբախտ սիրո առաջացրած տարբեր հոգեվիճակների, զգացողությունների ու գործողությունների թե՛ այլաբանական և թե՛ անմիջական արտացոլումներով: Նա պատկերում է հետզհետե ահագնացող սիրո քաղցը, անմատչելի դարձող սիրուհու կարոտը, նաև սիրած էակի հետ առնչվող որոշ տարակուսանքներ, տագնապներ և դրանց ուղեկից խնդրանքներ, աղաչանքներ ու վշտալից հարցումներ...

Սիրած էակից զրկված լինելու իրողության գիտակցումը սիրերգակին մղել է կորստյան ցավի պատկերմանը: Այս առումով առանձնանում է հատկապես «Էշխէմէդ հիվանդացիլ իմ» սիրերգը: Այստեղ գտնում ենք մեծ սիրերգուի հրաշակերտած հետևյալ տողերը.

*Ղալամըն գիրըս չէ գրում՝ մէ չորացած թանքի նըման.
խօսքիրըս մէմէկ չի ասվի՝ իմաստուններու բանքի նըման.
մէջըն չիմ կանացի մըրտնի՝ ծովի ծածկած վանքի նըման.
խոստովնահէրըս հիռացաւ, միղի համա իմ լալի:*

(Գրիչս գիրը չի գրում՝ չորացած թանքի նման. խոսքերս մեկ-մեկ չեն ասվի՝ իմաստունների պատմածների նման. մեջը չեմ կարողացել մտնել՝ ծովում ծածկված վանքի նման. խոստովանահայրս հեռացավ, մեղքի՛ համար եմ լալիս):

Ի սկզբանե ողբերգակ սիրերգուին հետապնդել է մահվան գաղափարը: Իրեն դահիճ սիրուհու զոհն ու սիրո նահատակ համարող երգիչը գրեթե բոլոր սիրերգերում, այս կամ այն կերպ, խոսում է իր մահվան մասին: Սիրո տառապանքի երգերում գծագրված է հիվանդաբեր ու մահաբեր սիրո ցավերից ու տանջանքներից տկարացած, խեղճ-ջրատար ու լքված սիրահարի տխուր պատկերը: Նման երգերում առկա են լիովին վիատված և մահին ապավինած բանաստեղծի ի խորոց սրտի բխած այսպիսի տողեր.

*Էլ ապրիլու ումիկ չունիմ, իմ օրըս կերած գիղենաք...
Էշխէն ուշք ու միտքըս կապած, ինձ ջրի փարած գիղենաք...
Ումբըս էրագի պէս գընաց. ծառըս չըխերած գիղենաք:*

(Էլ ապրելու հույս չունեմ, իմ օրը վերջացած իմացե՛ք... Սիրուց ուշք ու միտքս կապված, ինձ ջրի տարած իմացե՛ք... Կյանքս երագի պէս անցավ, ծառս պտուղ չտված իմացե՛ք):

Սայաթնովյան սիրերգերում գծագրված է նաև սիրահարի մեկ այլ պատկեր,

որին բնորոշ են անձնագրիությունն ու ըմբոստությունը: Հանուն իր սիրո և սիրուհու նա պատրաստ է կրել ամեն տեսակի տառապանք, տանել սիրած էակին համակած կամ նրան սպառնացող վիշտը, ողբալ նրա փոխարեն, մեռնել, զոհվել նրա համար: Իր այդ պատրաստակամությունը երգիչը երբեմն ներկայացնում է սիրած էակին չզիջելու վճռականությամբ...

*Չիմ քաշվի էկած մահէմէն,
նաղիփի փրված ահէմէն՝
բրճի-բրճի,
թէգուզ նաղամ գա շահէմէն,
յանր, չիմի փա, չիմ հիռացնի
քիզ քու յարէմէն,
բարէբարէմէն:*

(Չեմ վախենա վերահաս մահից, խանգարիչի տված սպառնալիքից՝ շարան-շարան, թեկուզ հրաման գա շահից, սիրուհի, չեմ զիջի, չեմ հեռացնի քեզ քո սիրեցյալից, քո հավասարից):

Սայաթ-Նովան գովերգելով կնոջ գեղեցկությունը և պատկերելով սիրո բերկրանքն ու հատկապես ողբերգական սիրո տառապանքը՝ հայ միջնադարյան սիրերգությունը հասցրել է մի նոր բարձունքի: Նա նաև համաշխարհային սիրերգության խոշորագույն ներկայացուցիչներից մեկն է...

ԱՅԼ ՄՈՏԻՎՆԵՐ

Սայաթ-Նովան հեղինակել է նաև խոհական և խրատական-բարոյախոսական խաղեր: Այս գործերի մեծ մասում աշուղ-բանաստեղծը խորհրդածելով աշխարհի և մարդու մասին՝ արժևորում է հատկապես մարդկային բարոյական արժանիքները: Բանաստեղծն առաջ է քաշում լավ մարդու իր իդեալը: Այդպիսի մարդու էական առաքինություններից է արժանապատվորեն (էյթիբարով) ապրելը, մարիփաթ-բարեկրթությունը, պատիվը, պարկեշտությունը, ամոթխածությունը, համեստությունը:

Երգիչը բարոյական բարձր արժեքներ է համարում նաև արդարությունն ու արդարադատությունը, ինչն ակնկալում է ոչ միայն երկնային Տիրոջից, այլև երկրային տերերից...

Ազգային և քրիստոնեական բարոյական գաղափարների հենքի վրա աշուղ բանաստեղծը պարսավում է մարդկային արատները, և նրա խոսքը հաճախ

միախառնվում է ծաղրին ու զավեշտին և երբեմն վերածվում երգիծանքի: Հեզությամբ ու խոնարհության հոգեշահ խրատներ անող բանաստեղծը ծաղրում է մեծամտությունը, իրեն բարձր արժանիքներ վերագրող չնչին մարդուն, ժլատ ու կծծի կյանքով ապրող ունևորին, անմիտ-անգետին, անզոր, վախկոտ, բայց և չմահավան ու մեծախոս մարդկանց...

Հիշատակելի է «Արի համով դ՛ուրուդ արա» խրատական խաղը: Այստեղ հեղինակը յուրովի արծարծում է չարին բարությանը հատուցելու քրիստոնեական պատվիրանը («Ով քիզի լիղի պարգիվէ, դուն տու շա՛քար»): Հայտնում է նաև այն միտքը, թե՛ «Ամէն մարդ չի կանա ճանգի շահով շրքար», այսինքն՝ ամեն մարդ չի կարող ճանկել շահավետ ինչք, հարստություն, պերճանք. բոլորը չէ, որ անազնիվ են, գոփող ու կեղեքող: Այդպիսիներից բացի կան նաև ազնիվ մարդիկ, բոլոր նրանք, ովքեր հետևում են բարոյական սկզբունքներին: Երգիչը հակադրում է ասըլ-ազնիվին և բէդասըլ-անազնիվին՝ նշելով, որ «բէդասըլն ասըլ չի դառնա», ինչպես որ «ձեծով չի խըրատվի խիվըն (խենթը)», լվանալով «չի սիպտակի սիվըն» կամ «ծուռն փէտըն չի դըրըստի ռանդան»: Այստեղ արդեն նա գործի է դրել ոչ թե ավետարանական պատվիրանները, այլ ժողովրդական առած-ասացվածքների իմաստությունը:

Խաղում հեղինակն առաջ է քաշում նաև հայ միջնադարյան մտքին բնորոշ (նախնիների վարքերով հաստատված) այն գաղափարը, թե բարոյականությունը գերազանց է գիտությունից (աստղերի հաշվարկն իմանալուց)։

Թէգուզ իմանաս, գիդենաս աստղիրու համբարքըն սիրուն.

անբարի գուրծըն կորած է՝ կարդա Հարանց վարքըն սիրուն...

Սայաթնոյվյան որոշ խոհական-խրատական խաղեր երբեմն թևակոխում են անձնական բնույթի բանաստեղծության ոլորտը: Իր անձնական ցավերը Սայաթնոյվան լավագույն ձևով արտահայտել է «Աշխարհս մէ փանջարա է» խաղում՝ հաղորդելով հատկապես իր հոգեկան բեզարածության-հոգնածության ծանր վիճակը: Մարդասեր բանաստեղծին անձնական ցավ է պատճառել ժողովրդի, հանրության ծանր վիճակը: Նա պատկերում է այն պատմական իրականությունը, երբ հանդես են գալիս նորահարուստ-աղաները: Այդ իրականության մեջ արհամարհվում են համեստ ու աղքատ կյանքով ապրող մարդիկ («Ում հագին հին շալ ին տեսնում, էլ չին ասում, թե՛ էս ո՛վ ա»): Ունահարվում են նախկին բարոյական արժեքները, ինչի հետևանքով նահանջում է դուրթ-ճշմարտությունը, և շատանում է սուտը («Ղուրթս է՛նդուր ճանփա չէ գընում՝ շատացիլ է խալխի

սուտըն»), բարոյալքվում է խալխ-հասարակությունը...

Անձնական բնույթ ունի նաև քամանչային ծոնված «Ամէն սագի մէջն գոված» նշանավոր խաղը: Այստեղ աշուղ-բանաստեղծը նույնացնելով իրեն իր նվագարանի հետ՝ գովերգում է նրան, արտահայտում իր ձգտումը՝ գոհացնելու իր լսարանին, նաև նոր բարձունքների հասցնելու քամանչան, այն է՝ կատարելագործելու իր արվեստը.

*Շապ տըխուր սիրոյ կու խընդացնիս, կու կըտրիս հիվընդի դողըն,
յիփ քաղցըր ձայնըդ վիր կ'օնիս՝ բաց կու՛լի հիդըդ խաղողըն.
խալխին էս իլթիմազն արա՛ ասին. «Ա՛պրի քու ածողըն».
քանի սաղ է Սայաթ-Նովէն, շապ բան կու տեսնիս, քամանչա:*

(Շատ տխուր սրտեր ես ուրախացնում, վերացնում ես հիվանդի դողը, երբ տարածում ես քաղցր ձայնդ՝ զվարթանում է քեզ հետ խաղացողը. այս խնդրանքն արա մարդկանց, որ ասեն. «Ապրի՛ քո նվագողը». քանի ողջ է Սայաթ-Նովան, շատ բան կտեսնես, քամանչա):

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ՄՐՎԵՍՏԸ

Ինչպես իր սիրերգերը, այնպես և այլ բնույթի խաղերը Սայաթ-Նովան հյուսել է ինքնատիպորեն և գեղարվեստական բարձր մակարդակով՝ գործի դնելով իր ճոխ լեզուն ու ոճը, ինքնատիպ բանաստեղծական արվեստը:

Հայերեն խաղերի լեզուն թիֆլիսահայ բարբառն է: Աշուղ-բանաստեղծը կարողացել է վեր հանել արևելահայ և արևմտահայ տարբեր խոսվածքների ուրույն համադրություն հանդիսացող այդ բարբառի քերականական-ձևաբանական լայն հնարավորությունները, ճկունությունը, բառ ու բանի հարստությունն ու գունագեղությունը:

Այսուհանդերձ, որքան էլ հարուստ, թիֆլիսահայ բարբառն իր պատրաստի խոսակցական, բանահյուսական մակարդակով, բնականաբար, չի բավարարել բանաստեղծական խոր անհատականությամբ օժտված մեր երգչին: Ուստի նա այն առավել ճոխացրել է բազում բառ ու բառաձևերով՝ փոխառված գրաբարից, միջին հայերենից, այլ բարբառներից, ինչպես նաև արևելյան լեզուներից. գործածել է նաև որոշ ինքնահնար բառեր:

Լեզվական երեք համակարգերում Սայաթ-Նովան ստեղծել է իր յուրահատուկ ոճը: Դրանով է պայմանավորված նաև նրա քնարերգության խիստ անհատական հնչերանգը...

Սայաթ-Նովայի բանաստեղծական արվեստը, այն է՝ նրա կիրառած պատկերավորման, ոճական և արտահայտչական միջոցների համակարգը, հիմնականում կայացել է ժողովրդական և աշուղական երգարվեստի հիմքի վրա, նաև միջնադարյան գրավոր-անհատական բանաստեղծության որոշ ավանդույթների յուրացմամբ:

Հատկապես իր սիրերգության մեջ երգիչը բազմիցս դիմել է թե՛ ավանդական և թե՛ ինքնաստեղծ բազմապիսի համեմատությունների ու փոխաբերությունների: Սայաթ-Նովան առավելապես փոխաբերությունների բանաստեղծ է: Նա դիմել է նաև չափազանցության, այլաբանության, անձնավորման, զուգահեռականության, հակադարձության և այլ պատկերավորման միջոցներին: Պատկերվող հոգեվիճակներն ու արտահայտվող գաղափարներն առավել տպավորիչ դարձնելու համար կիրառել է նաև արտահայտչական բազում հնարանքներ: Այդ ամենի շնորհիվ դրսևորվել են Սայաթ-Նովայի բանաստեղծական արվեստին բնորոշ էական հատկանիշները՝ բազմազանությունն ու նրբերանգությունը:

Հարուստ և բազմազան է նաև Սայաթ-Նովայի հանգարանը: Բանաստեղծը հաճախ կազմել է հնչեղ, խոր ու ինքնօրինակ հանգեր: Իր խաղերը նա օժտել է նաև հանգգիտությամբ, ինչի շնորհիվ ևս նրա բանաստեղծական խոսքը ձեռք է բերել արտակարգ հնչողություն ու երաժշտականություն:

Չափազանց բարձր է գնահատվել Սայաթ-Նովայի բանաստեղծական ինքնօրինակ արվեստը: Երգիչն ինքը իր այդ տարբեր-ուրիշ արվեստն արժևորել է «Դուն էն գլխէն իմաստուն իս» խաղի նշանավոր տողերում.

*Ամէն մարդ չի կանա խըմի՛ իմ ջուրըն՝ ո՛ւրիշ ջըրէն է.
ամէն մարդ չի կանա կարդա՛ իմ գիրըն՝ ո՛ւրիշ գըրէն է.
Բունիաթըս ավագ չիմանաս. քարափ է, քարուկըրէն է:*

Կատարելության ձգտող իր բանաստեղծական արվեստի շնորհիվ է նաև, որ մեծ սիրերգու և մարդասեր Սայաթ-Նովան մինչև օրս խոսում է բոլոր սերունդների մտքի ու սրտի հետ:

Մեծ սեր ու տառապանք, մարդասիրական բարձր գաղափարներ՝ արտահայտված բանաստեղծական գեղեցիկ ու ինքնատիպ ձևերի մեջ. այս է, ահա, անզուգական աշուղ-բանաստեղծ Սայաթ-Նովայի մեծությունը:

Հայ միջնադարյան գրականությունը, Ոսկեդարից սկսած, ծգվել է մինչև 18-րդ դարի երկրորդ կեսը: Տասնչորս դարերի ընթացքում այն ծավալվել է գեղարվեստական ու գաղափարական բարձր մակարդակով՝ արտացոլելով հայ ժողովրդի պատմությունը, ազգային մտածողությունը, հոգեկան կերտվածքը, բարոյական ըմբռնումները, կենսազգացողությունը, իղձերն ու տենչերը:

Մերօրյան այբուբենի արարումից հետո գրական նշանակալից երևույթներ են հատկապես Մովսես Խորենացու, Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու ստեղծագործությունները, առակագրությունը, հայրեններն ու սայաթնովյան քնարերգությունը:



Հարցեր և առաջադրանքներ

1. Պատմական դր ժամանակաշրջանում է գրական ասպարեզ իջել Սայաթ-Նովան:
2. Կյանքի ինչ ճանապարհ է անցել տաղերգուն:
3. Որպես սիրերգակ՝ Սայաթ-Նովան ինչ ներդրում ունի երգարվեստում և գրականության մեջ:
4. Ինչ բարոյախոսական գաղափարներ են կրում աշուղ-բանաստեղծի խոհախրատական երգերը:
5. Ներկայացրե՛ք Սայաթ-Նովայի կենսագրությունը և գործունեությունը՝ ըստ փաստերի և հուշագրության:
6. Կազմե՛ք գրողի գրական դիմանկարը՝ ըստ կենսագրական տեղեկությունների և ժամանակակիցների հուշերի:
7. Վերաշարադրե՛ք խաղերի բովանդակությունը՝ ներկայացնելով բանաստեղծի արտահայտած հույզերը (անհատական աշխատանք):
8. Վերլուծե՛ք և դատողություններ արե՛ք խաղերի հիմնական գաղափարների շուրջ:
9. Ներկայացրե՛ք Սայաթ-Նովայի լեզվաոճական առանձնահատկությունները՝ բերելով համապատասխան օրինակներ (խմբային աշխատանք):
10. Որևէ տաղ փոխադրե՛ք գրական հայերենի և մեկնաբանե՛ք:
11. Կազմե՛ք բացատրական բառարան՝ ներկայացնելով Թիֆլիսի բարբառին բնորոշ բառերը և դրանց բացատրությունները:
12. Սայաթ-Նովայի խրատական տաղերում պատկերված իրականությունը, բարոյական միջավայրը համեմատե՛ք ժամանակակից իրականության և մերօրյա բարքերի հետ՝ բանավեճ կազմակերպելով այս հարցի շուրջ (խմբային աշխատանք):
13. Վերաշարադրե՛ք խաղերի բովանդակությունը՝ ներկայացնելով բանաստեղծի արտահայտած հույզերը:
14. Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ ստեղծե՛ք սահիկաշար՝ Սայաթ-Նովայի ստեղծագործության թեմաներով:
15. Գնահատե՛ք հեղինակի գրական ժառանգությունը: